ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/12

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Դէկս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Դէկս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Առաքելյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Դէկս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.01.2022թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել՝ չկայացած հայտարարել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթը,

Կամ

պարտավորեցնել՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 21.01.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 24.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/1239-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Բողոքաբերը 24.01.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձի 25.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/12 համարի ծածկագիրը:

04.02.2022թ.-ին և 18.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 04.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.02.2022թ.-ին:

2. «Դէկս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դէկս» ՍՊԸ-ն 24.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն՝ կից ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ հայտերի բացման նիստում գնահատող

հանձնաժողովը արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով armeps համակարգում փաստաթղթերը կցված չեն եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթ, որին սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն՝ կից ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:

Սակայն արդեն Ընկերության համար անհասկանալի պայմաններում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը

արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով armeps համակարգում փաստաթղթերը կցված չեն եղել:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հայտ, որի հաջողությամբ բեռնվելու վերաբերյալ ստացվել է պատասխան և համակարգի միջոցով և էլ. Փոստի միջոցով:

Ցանկանում ենք նշել, որ Ընկերությունը այլևս չուներ որևէ հնարավորություն ստուգելու հայտի բեռնման հաջող ավարտի մասին, քան ստանալ համակարգի միջոցով հավաստումներ և արդյունքում համակարգի անհսականալի աշխատանքի շնորհիվ Ընկերությունը զրկվել է իր համար այդքան կարևոր մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելու հնարավորությունից;

Ավելին, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանգիր ավելի բարձր գին առաջարկած մասնակցի հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել՝ չկայացած հայտարարել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթը,

Կամ

պարտավորեցնել՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Դէկս» ՍՊԸ-ն 09.02.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«04.02.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/12 ծածկագրով բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի քննության ընթացքում բողոքներ քննող անձի կողմից հարց բարձրացվեց հետևյալ երկու հանգամանքի վերաբերյալ, մասնավորապես՝

1. Արդյոք «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն հանդիսանում է ԱԱՀ վճարող թե չէ.

2. «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից երբ է ներկայացվել սույն բողոքի շրջանակներում վիճարկվող ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտը:

Վերը նշված հարցադրումների վերաբերյալ հայտնում ենք, որ Ընկերությունը հանդիսանում է ԱԱՀ վճարող և «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվել է 14.01.2022թ. ժամը 17:28-ին;

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն կարևոր հանգամանքի վրա, որ եթե armeps համակարգից բեռնում ենք «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի փաթեթը և ուսումնասիրում փաթեթի պարունակության բեռնվածության չափը /размер файла /, ապա պարզ է դառնում, որ առկա է ֆայլեր, այդ թվում գնային առաջարկ, քանի որ փաթեթի բեռնվածության չափը /свойства / կազմում է՝ 2,00 ԿԲ (2 048 байт)

Վերը նշված փաստը վկայում է, որ համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով Ընկերությունը զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:»:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտե-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/1/1385-2022 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Դէկս» ՍՊԸ-ի կողմից 24.01.2022թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 31.01.2022թ.-ին թիվ 02/16.4/759-2022 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

««Դէկս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան և ընտրված մասնակիցը որոշվելու է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընթացակարգի մասնակիցների թիվը հայտերի բացման պահին ըստ www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) 14-ն է եղել:

Հայտերի բացման ժամանակ պարզվել է, որ ընկերության հայտը կայքում կցված չի եղել, ինչի մասին արձանագրվել է ընթացակարգը գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2022 թվականի հունվարի 17-ի N 2.1 արձանագրությամբ: Կայքում ընկերության կողմից լրացված է եղել միայն գնային առաջարկը, որը համաձայն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.3 կետի պարտադիր պետք է լրացված լիներ առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման:

Տեղեկացնում եմ, որ հանձնաժողովը որևէ գործողությամբ չի խոչընդոտել ընկերության կողմից հայտերի ներկայացմանը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ընկերության կողմից կայքում լրացված 2,611,965,314.00 (երկու միլիարդ վեց հարյուր տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր տասնչորս) ՀՀ դրամ գնային առաջարկն ԱԱՀ-ով կկազմի 3,134,358,376.8 (երեք միլիարդ մեկ հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր հիսունութ հազար երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ 8) ՀՀ դրամ, որը 13-րդ է:

Տեղեկացնում եմ նաև, որ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, ինչը կայքում հայտերի բացման պահին կցված չի եղել, որն էլ արձանագրել է հանձնաժողովը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը գործել է օրենքի և կարգի պահանջներին համապատասխան:

Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԴԷկս» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 17.01.2022թ.-ին ժամը 10:30-ն ներառյալ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.01.2022թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը Armeps (www.armeps.am) համակարգում կցված չեն:

v. Բողոքներ քննող անձը 09.02.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/2468-2022 գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել արդյոք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով ներկայացված փաստաթղթերի չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՝ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել Ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

vi. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2022թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է, որ համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի է armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնել են, որ վերոհիշյալ ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 06/12/2021թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 17/01/2022թ.-ը համակարգում խափանումներ չեն գրանցվել, որի միջոցով իրականացվել է թվով 3826 հայտի փաթեթի ներբեռնման գործընթաց՝ թվով 809 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 14/01/2022թ.-ից իրականացվել է թվով 84 հայտի բեռնում, որոնցից գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 7 հայտ (ընդհանուր թվով՝ 14 հայտի փաթեթ), որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Միաժամանակ տեղեկացրել են, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, բայց, քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

vii. https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Դէկս» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը բացակայում է, որևէ ֆայլ կցած չէ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից 24.01.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը

մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում

սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը Armeps (www.armeps.am) համակարգում կցված չեն: Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը 09.02.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/2468-2022 գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել արդյոք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով ներկայացված փաստաթղթերի չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՝ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել Ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն: Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2022թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է, որ համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի է armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով: Ինչ վերաբերում է համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնել են, որ վերոհիշյալ ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 06/12/2021թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 17/01/2022թ.-ը համակարգում խափանումներ չեն գրանցվել, որի միջոցով իրականացվել է

թվով 3826 հայտի փաթեթի ներբեռնման գործընթաց՝ թվով 809 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 14/01/2022թ.-ից իրականացվել է թվով 84 հայտի բեռնում, որոնցից գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 7 հայտ (ընդհանուր թվով՝ 14 հայտի փաթեթ), որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում: Միաժամանակ տեղեկացրել են, որ հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, բայց, քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս ոչ պիտանի լինելը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում: https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/11» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Դէկս» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը բացակայում է, որևէ ֆայլ կցած չէ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգին «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դէկս» ՍՊԸ-ն ներբեռնել է թերի փաթեթ, որի արդյունքում հայտի փաթեթը հնարավոր չէ բեռնել, որպես հետևանք բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դէկս» ՍՊԸ-ի կողմից 24.01.2022թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/12 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**